

կան—փաստարանական թեղերով համեմուած տեսութիւնները: Ծանր պատասխանատուութեան հանդէպ կը դռնէր մեզ (ի հարկէ անծանօթ մեր աշխատանքներուն): «Մատի ծայրով մի՛ մօտենաք դործին», կ'ըսէր... Այսօր ան ալ եկած է մեզ մօտ եւ կ'ըսէ. «Բռափօ ձեզի, կեցցէ՛ք, տղայք, չսպասածս տեսայ ձեր մէջ»...

Ներկայ էր նաեւ Եղնիկ վարդապետը, որ իբրեւ Առաջնորդ, սիրով ստանձնած էր ազգաս ընտանիքները պահպանելու հոգսը, վերջընելով մեր բեռան ծանրութեան մի մասը:

Ժողովը ղեռ չսկսած՝ բոլորի ղէմքին կար անհանդատութիւն մը՝ շտապելու, ժամ առաջ թռչելու դիրքերը, զինուորներու մօտ, թըչնամու ղէմ... Անհամբերութիւնը եւ աճապարանքը կը շեշտուէին մանաւանդ, երբ մերթ ընդ մերթ կ'աւելնային դրսի համազարկերը:

Չորրորդ ղեռներն էր. բոլորը քնատ էին, ձայներնին դադրած, շատերը հաղիւ կը խօսէին...

Բոլորն ալ խօսք ունէին: Հանգամանօրէն նկատի առնելով չորս օրուան մղած կռիւները եւ հետեւանքները, կարգադրուեցաւ Թէքալլիֆի Հարպիյէի շրջանապետի օգնականը իբրեւ ղեկավար փոխադրել արեւելեան շրջանը, որու պատասխանատուն վիրաւորուած էր: Ապա կատարուեցան զինուորական ուժերու լրացուցիչ դասաւորումներ եւ փոփոխումներ: Ամբարբի շրջանը զրկուեցան նոր ուժեր, ղեկավարութեամբ Արմենակ Պաղիկեանի եւ Կարճկանցի Մանուկի: Առանձին ուշադրութիւն դարձնելով առաջաւոր դիրքերու ամբայման աշխատանքներու վրայ, որոշուեցաւ անոնց ետին ունենալ միշտ երկրորդական դիրքեր, պատրաստ վիճակի մէջ: Որոշուեցաւ բոլոր փողոցներու բերանները կտրել բարեկազմներով (Թուով 14 հատ). ամբայցնել ներքին յարկերը կրկնակ պատերով. հաստ գերաններով ապահովել առաստաղները. դիրքերը չփոխել տուն առ տուն, այլ պատ առ պատ, այսինքն՝ այն պատը որ կը ծառայէ իբրեւ դիրք, անոր ետեւ կանգնեցնել ուրիշ պատ, որ եթէ ստաջիներ փճանայ կամ քանդուի, երկրորդ կառուցածը՝ ծառայէ իբր դիրք, պատրաստելով 3-րդ պատը: Որոշուեցաւ թշնամու դիմաց գանուող

տուներու դուռները բաց շարել, շէքը հրդեհօտէ ազատ կացուցանելու համար. որովհետեւ նկատուած էր, որ թշնամին մեր դիրքերը կը փորձէ միայն դուռներէն կրակել: Որոշուեցաւ Այդեստան սուրհանդակ զրկել եւ կարգադրուեցան ուրիշ Ձինուորական կարգապահական խնդիրներ:

Ժողովը փակուեցաւ, ու շրջանապետները անցան դիրքերը:

Նոյն ղեռներն իսկ խմբագրուեցան հետեւեալ յայտարարութիւնը եւ զինուորական կարգապահական հրահանգները, որոնք ձեռագիր արտագրուելով զրկուեցան դիրքերը, Ապրիլի 12-ին —

**Ձինուոր ընկերներ,**

Վեցերորդ օրն է ահա որ մեր կուրծքը ղէմ տուած թշնամուն, արիարար կը մարանչինք: Թնդանօթներ եւ հազարաւոր հրացաններ ունեցող թշնամին անգոր եղաւ ճեղքելու մեր դիւրը, բնկճելու մեզ: Մենք, որ որոշած ենք մեր կեանքը, պատիւը եւ իրաւունքը հերոսութեամբ պաշտպանել, ղեռ շատ անակնկալներու ալ պիտի սպասենք եւ դիմադրաւենք: Զէվաէթեան վահմակը իր գրոհներով, իր յարձակողականներով իայտատակուած է ցարդ՝ ծանր կորուստներով, շմեցուցիչ հարուածներով: Փաստը ամենուդ աչքի առաջն է:

Ձինուորներ, սոյն պայմաններու մէջ մեր դիմադրութիւնը երկար եւ բեղուն ընելու համար, կը յորդորենք բոլորովին լինել սառն, չչփոթուող, կարգապահ եւ խնայող: Ահա սառնք են, որ մեր դիմադրութիւնը պիտի դարձնեն կանոնաւոր, արժէքաւոր եւ հպարտ: Այս մասին կը հրաւիրենք ձեր ուշադրութիւնը ձեզ զրկուած զինուորական հրահանգներուն, որոնց ղէմ անաստողը պատասխանատու է:

Ձինուորներ, ինչպէս միշտ ըսած ենք, այժմ ալ կը կրկնենք՝ խնայողութիւն եւ խնայողութիւն. թանգ պահէ՛ք ձեր կեանքը, խնայեցէ՛ք փամփուշտը եւ ղէնքը: Ահա գործօններ յորով պիտի յարատեւէ մեր դիմադրութիւնը. որքան երկարի ան, այնքան յոյսի յաջողութիւնը պիտի աւելնայ:

Եղէ՛ք յանդուգն, խիղախ, բայց զգոյշ եւ կեանք խնայող: Այս բոլորի հետ խնայեցէ՛ք փամփուշտ. թող թշնամին վառէ որքան կ'ու-